«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 02.03.2017 թ. թիվ 159 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 1 23.02.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը:

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կրթական ծրագրերի (այսուհետ նաև՝ ԿԾ) հաստատման կարգով սահմանվում է բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ի հաստատման գործընթացը:

Համալսարանի կրթական ծրագրերի հաստատման կարգը ներառում է.

- ԿԾ-ի նախնական հաստատում և արտոնում,

- ԿԾ-ի փաթեթի ստեղծում և փորձաքննություն,

- Փորձաքննության արդյունքով ծրագրի հաստատում:

1.2. Համալսարանի ԿԾ-ի արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացի նպատակները և խնդիրները սահմանվում են սույն կարգով: Այն նաև որակի ապահովման մեխանիզմներից է: Բոլոր ԿԾ-ները պետք է անցնեն հաստատման գործընթաց:

1.3. Համալսարանի նոր ԿԾ-ի ստեղծման առաջարկները ներկայացնում են ուսումնական ստորաբաժանումները (ֆակուլտետ, ամբիոն)՝ ԿԾ-ի ներդրումից առնվազն 12 ամիս առաջ:

1.4. Համալսարանի բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ի արտոնումը, փորձաքննությունը և հաստատումը կատարվում է ըստ ժամանակացույցի (Հավելված 1):

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԾ-Ի (ՎԵՐԱ)ՄՇԱԿՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ԱՐՏՈՆՈՒՄ

2.1. ԿԾ-ի նախնական հաստատումը կպտարվում է ուսումնական ստորաբաժանումում (ֆակուլտետ, ամբիոն)՝ նպատակ ունենալով սկսելու նոր ԿԾ-ի մշակման գործընթացը:

2.2. Համալսարանի ԿԾ-ի արտոնման նպատակն է գնահատել ուսումնական ստորաբաժանման ներկայացրած առաջարկը, հիմնավորել դրա համապատասխանությունը ԿԾ-ի հաստատման չափանիշներին:

2.3. Գործընթացի խնդիրներն են.

- հիմնավորել, որ ԿԾ-ը նպատակահարմար է իրականացնել տվյալ ֆակուլտետում: (Այն իրագործելի է և կա անհրաժեշտ ներուժ ծրագիրը մշակելու փորձագիտական կարողության տեսանկյունից, ռեսուրսային ապահովվածության գնահատականը և ռեսուրսների անհրաժեշտությունը),

- ուսումնասիրել և պարզել տարածքային շուկան, վերլուծել առաջարկվող ԿԾ-ի մրցակցային առավելությունները տարածքային այլ բուհերի կրթական ծրագրերի նկատմամբ:

2.4. Համալսարանի ԿԾ-ի ստեղծման գործընթացը.

- նոր ԿԾ-ի ստեղծելու առաջարկության հայտը (այսուհետ՝ ԿԾԱՀ) ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի (այսուհետ՝ ՖԳԽ) որոշմամբ՝ ձևաթղթին համապատասխան,

- ՖԳԽ-ի որոշման հիման վրա Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է ԿԾ-ի (վերա)մշակման մասնագիտական խումբ (այսուհետ՝ ԾՎՄԽ), որը մշակում է նոր ԿԾ-ը:

ԾՎՄԽ կազմում ընդգրկվում են.

ա) փորձառու պրոֆեսորներ, դոցենտներ,

բ) մասնագիտական ոլորտին առնչվող հիմնական գործատուների առնվազն մեկ ներկայացուցիչ,

գ) գիտակրթական համապատասխան ոլորտի արտաբուհական առնվազն մեկ մասնագետ,

դ) բարձր կուրսի ուսանողներ (բակալավր, մագիստրոս) և այլ փորձագետներ:

ԾՎՄԽ անդամներից մեկը (պրոֆեսոր կամ դոկտոր) ընտրվում է մասնագիտական խմբի ղեկավար, որը պատասխանատու է ԿԾ-ի ձևակերպման և կրթական ծրագրի հաստատման փաթեթի (այսուհետ՝ ԿԾՀՓ) ստեղծման համար:

Համալսարանի ուսումնամեթոդական վարչությունը (այսուհետ՝ ՈՒՄՎ) անհրաժեշտ խորհրդատվություն է ներկայացնում ԾՎՄԽ-ին:

ԿԾՀՓ կազմում է ծրագրերի (վերա)մշակման մասնագիտական խումբ (այսուհետ՝ ԾՎՄԽ):

2.5. ԿԾ-ի արտոնման գործընթացը.

- ԾՎՄԽ-ի ղեկավարը արտոնման հայտ է ներկայացնում (հայտի ձևաթերթը՝ տես հավելված 3-ում) Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով (այսուհետ՝ ՈՒԱԳ) պրոռեկտորին:

2.6. ՈՒԱԳ պրոռեկտորի կողմից արտոնումից հետո ԾՎՄԽ-ն և հավատարմագրման աշխատանքային խումբը կազմում են ԿԾ հավատարմագրմանը նախապատրաստելու առաջնահերթ գործողությունների ծրագիր (Որակի ապահովման ազգային կենտրոնի պահանջների համապատասխան) և ստեղծում է ԿԾՀՓ-ը:

III. ԿԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ.

3.1 Կրթական ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթը (այսուհետ՝ ԿԾՀՓ) ներառում է.

- ԿԾ-ի մշակման արտոնման եզրակացությունը,

- ԿԾ-ի մասնագիրը,

- Արտաքին փորձաքննության եզրակացությունը:

3.2. ԿԾՀՓ կազմում է ծրագրերի (վերա)մշակման մասնագիտական խումբ (այսուհետ՝ ԾՎՄԽ):

3.3. Համապատասխան ուսումնական ստորաբաժանման ղեկավարը և ՈՒԱԳ պրոռեկտորը պատասխանատու են ծրագրի փաստաթղթային փաթեթը փորձաքննական հանձնաժողովի (այսուհետ՝ ՓՔՀ) կողմից դիտարկելու համար:

3.4. Ծրագրի փորձաքննական հանձնաժողովը (ՓՔՀ) ձևավորվում է ՈՒԱԳ պրոռեկտորի կողմից:

3.5 ՓՔՀ փորձագետները չպետք է անմիջական առնչություն ունենան առաջարկվող ծրագրի հետ:

3.6 Փորձաքննական հանձնաժողովը (այսուհետ՝ ՓՔՀ) եզրակացություն է տալիս ՖԳԽ-ին ծրագրի հաստատման կամ մերժման մասին:

3.7 ՖԳԽ-ը դիտարկում է ՓՔՀ զեկույցի եզրակացությունը և ԾՎՄԽ-ի կողմից պատրաստված ԿԾՀՓ-ը: Եթե ՖԳԽ-ը գտնում է, որ ՓՔՀ պահանջները և առաջարկությունները բավարարված են, ապա ԿԾ երաշխավորվում է Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

Հավելված 1

Բակալավրի ԿԾ-ի հաստատման ժամանակացույց

1 հոկտեմբեր	ԿԾ-ի հայտի ներկայացում ստորաբաժանման կողմից
15 հոկտեմբեր	ԿԾ-ի հայտի քննարկում ՖԳԽ-ում
20 հոկտեմբեր	ԿԾ-ի առաջարկի հայտի ձևակերպում և համաձայնեցում ՈՒԱԳ պրոռեկտորի հետ
1 նոյեմբեր	ԿԾ-ի ԾՎՄԽ ստեղծում
1 ապրիլ	ԿԾ-ի մասնագրի պատրաստում
1 մայիս	ԿԾ-ի հաստատման փաստաթղթային փաթեթի պատրաստում
15 մայիս	ԿԾ-ի փորձաքննական հանձնաժողովի ստեղծում (ՓՔՀ)
15 հունիս	ԿԾ-ի փորձաքննություն և եզրակացության պատրաստում
15 սեպտեմբեր	ՖԳԽ-ը քննարկում է ՓՔՀ-ի եզրակացությունը և երաշխավորում է Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը
1 հոկտեմբեր	Համալսարանի գիտական խորհուրդը քննարկում է ԿԾ-ն և կայացնում որոշում

Հավելված 2

Մագիստրոսի ԿԾ-ի հաստատման ժամանակացույց

1 հոկտեմբեր	ԿԾ-ի հայտի ներկայացում ստորաբաժանման կողմից
15 հոկտեմբեր	ԿԾ-ի հայտի քննարկում ՖԳԽ-ում
20 հոկտեմբեր	ԿԾ-ի առաջարկի հայտի ձևակերպում և համաձայնեցում ՈՒԱԳ պրոռեկտորի հետ
1 նոյեմբեր	ԿԾ-ի ԾՎՄԽ ստեղծում
30 մարտ	ԿԾ-ի մասնագրի պատրաստում
30 ապրիլ	ԿԾ-ի հաստատման փաստաթղթային փաթեթի պատրաստում
15 մայիս	ԿԾ-ի փորձաքննական հանձնաժողովի ստեղծում (ՓՔՀ)
30 մայիս	ԿԾ-ի փորձաքննություն և եզրակացության պատրաստում
15 սեպտեմբեր	ՖԳԽ-ը քննարկում է ՓՔՀ-ի եզրակացությունը և երաշխավորվում է Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը
30 սեպտեմբեր	Համալսարանի գիտական խորհուրդը քննարկում է ԿԾ-ն և կայացնում որոշում

Հավելված 3

«Հաստատում եմ»

_____201__թ.

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

_____ Ս.Թումանյան

1. Ընդհանուր դրույթներ

_____

(ֆակուլտետը)

_____

(ԿԾ-ի անվանումը և դասիչը)

_____

Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) մակարդակը, շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)

2. ԿԾ-ի մշակման նպատակը և խնդիրները

_____

_____

3. ԿԾ-ի մշակման ռազմավարական գործողությունները

_____

_____

4. ԿԾ-ին ներկայացվող պահանջները

_____

_____

5. ԿԾ-ի կառուցվածքը և բովանդակությունը

5.1. ԿԾ-ի բնութագիրը

_____

_____

5.2. Շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը

_____

_____

5.3. Ուսուցման վերջնարդյունքներին ներկայացվող պահանջները

_____

_____

5.4. Մասնագիտության ընդհանուր բնութագիրը

5.5. ԿԾ-ի ուսումնական պլանը (մոդուլային կառուցվածքով)

5.6. Շրջանավարտին ներկայացվող պահանջները

5.7. ԿԾ-ի ուսումնամեթոդական ապահովումը

5.8. Պրակտիկան

5.9. Պահանջվող կոմպետենցիաների ձևավորման համար անհրաժեշտ ռեսուրսները

5.10. ԿԾ իրականացման համար անհրաժեշտ կրթական տեխնոլոգիաներ և մեթոդներ

5.11. Արդյունքների գնահատում և ստուգում

ԿԾ (վերա)մշակման մասնագիտական խմբի (ԾՎՄԽ) ղեկավար՝

Անդամներ՝

ԿԾ-ն քննարկվել և հավանության է արժանացել ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

(նիստի համարը, ամսաթիվը)

Ֆակուլտետի դեկան՝